

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ**

*Ծրագրի համակարգման գրասենյակ*

**Social Protection Administration II Project**

*Project Coordinaton Unit*

05.08.2015 թ.

<<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ  
Տնօրեն Թ.Գափոյանին

Հարգելի պարոն Գափոյան

Հիմք ընդունելով Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, << ֆինանսների նախարարության <<Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն>> ՊՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ (այսուհետ՝ Խորհրդատու) միջև 22.07.2015 թ. կնքված SPAP IIC-3.1.1c պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), << ԱՍՀ նախարարի հանձնարարությամբ հայտնում են, որ անհրաժեշտ է մեկնարկել Թալինի, Ծաղկահովիտի և Հրազդանի ՀՍԾՏԿ-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և Պայմանագրով նախատեսված հարակից ծառայությունների մատուցման աշխատանքները: Կից ներկայացնում են << ԱՍՀ նախարարի N 24-Ա/1 հրամանի պատճենը, որով սահմանված են ՀՍԾՏԿ-ների նախագծմանն ու շինարարություններին ներկայացվող հիմնական պահանջները:

Ըստ այդմ անհրաժեշտ է շտապ ներկայացնել նշված օբյեկտների նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման ժամանակացույցը և մեկնարկել համապատասխան աշխատանքները:

Առդիր՝ 11 էջ:

Հարգանքով՝

Ծրագրի համակարգող

Արտակ Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«06» փետրվարի 2015թ.

N 24-Ն/1

**ԳՈՐԾՈՂ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՄԱԼԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ  
ՇԵՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎՐԱ ՆՈՐ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇԱԿՎՈՂ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆԱՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել՝ գործող և նոր ստեղծվող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ կենտրոն) ստեղծման նպատակով հատկացված շենքային տարածքներին, դրանց հիմնանորոգման, ինչպես նաև հատկացված հողատարածքի վրա նոր շենքերի կառուցման նպատակով մշակվող նախագծանախահաշվային փաստաթղթերով կենտրոններին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետությունում համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման շրջանակներում գործող կենտրոնների և նոր ստեղծվող յուրաքանչյուր կենտրոնի հիմնանորոգման կամ նոր շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախագծման տեխնիկական առաջադրանքի կազմման և հաստատման գործընթացի

ապահովման նպատակով՝ ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) հետևյալ կազմով.

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**

Ա. Պետրոսյան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

**Անդամներ՝**

Է. Գևորգյան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Ա. Մինասյան նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ

Ա. Մանգասարյան նախարարության աշխատակազմի գրադվածության պետական գործակալության պետ

Ա. Սիմոնյան նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդատու

Ա. Սավգույան նախարարի խորհրդական |

Ս. Սախյան նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալ

Կ. Սարգսյան «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

Ա. Սարգսյան Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման 2-րդ ծրագրի համակարգող (համաձայնությամբ)

Ա. Մելիքսեթյան անկախ փորձագետ (համաձայնությամբ)

Ա. Ավագյան նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության նպաստների բաժնի գլխավոր մասնագետ, աշխատանքային խմբի քարտուղար

**3. Սահմանել, որ՝**

1) գործող և նոր ստեղծվող կենտրոնների հիմնանորոգման կամ նոր շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով սահմանված կարգով ընտրված նախագծային կազմակերպությունը (այսուհետ՝



նախագծային կազմակերպություն) սույն հրամանի 1-ին կետով հաստատված պահանջների համաձայն մշակում և աշխատանքային խմբի համաձայնեցմանն է ներկայացնում տվյալ կենտրոնի նախագծման տեխնիկական առաջադրանքը.

2) գործող և նոր կենտրոնների ստեղծման նպատակով նախարարության աշխատակազմին ամրացված կամ անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված տարածքների կամ հողատարածքների առանձնահատկություններից ելնելով և դրանց առանձին բաղադրիչները սույն հրամանի 1-ին կետով հաստատված պայմաններին չհամապատասխանելու դեպքում՝ աշխատանքային խումբն իրավասու է՝ ըստ անհրաժեշտության տվյալ կենտրոնի նախագծման տեխնիկական առաջադրանքում առանձին բաղադրիչների համար սահմանել այլ պահանջներ:

4. Աշխատանքային խմբին՝ նախագծային կազմակերպությունից տվյալ կենտրոնի համար նախագծման տեխնիկական առաջադրանքը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկել այն և համաձայնություն տալու դեպքում, ներառյալ առանձին բաղադրիչների համար աշխատանքային խմբի կողմից սահմանված այլ պահանջները, ներկայացնել նախարարի հաստատմանը:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

### ՊԱՀԱՆՁՆԵՐ

**Գործող և նոր ստեղծվող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների ստեղծման նպատակով հատկացված շենքային տարածքներին, դրանց հիմնանորոգման, ինչպես նաև հատկացված հողատարածքի վրա նոր շենքերի կառուցման նպատակով մշակվող նախագծանախահաշվային փաստաթղթերին ներկայացվող**

<b>1. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ կենտրոն) դասակարգում</b>	
ըստ աշխատողների թվի	փոքր (մինչև 20 աշխատող)
	միջին (20-ից 40 աշխատող)
	մեծ (40-ից ավել աշխատող)
<b>2. Կենտրոնի տեղակայման պայմաններ</b>	
տեղակայում	բնակավայրի կենտրոնական մաս
	համեմատաբար խիտ բնակչություն ունեցող տարածք
	տրանսպորտային հանգույցներին մոտ տարածք
	հանրային տարբեր ծառայություններին մոտ տարածք
	այլ կոմունիկացիաների առկայությամբ տարածք
շինություն և հողատարածք	շենքի և բակային տարածքի համար սահմանված մակերեսով տեղակայման չափանիշներին համապատասխան հողատարածք
	սահմանված մակերեսին համապատասխան առանձին շենք՝ տեղակայման և բակային պայմաններին համապատասխան
	հանրային շենքերում սահմանված մակերեսներին համապատասխան տարածքներ՝ առաջին հարկում պարտադիր տեղակայում ունեցող սենյակների համար սահմանված մակերեսների ապահովման դեպքում
բակային տարածք և մուտքի տեղակայում	նոր կառուցվող շենքի դեպքում՝ նախատեսել համապատասխան նորմերով ավտոկայանատեղի, կանաչապատ տարածքներ, տաղավարներ հաճախորդների համար և սպասարկման այլ պարագաներ (աղբաման, նստարան, լուսավորվածություն և այլն)
	արդեն կառուցված առանձին շենքի կամ շինության ամբողջական մասնաշենքի դեպքում այն ապահովել ավտոկայանատեղիով և բակային տարածքի բարեկարգմամբ
	հանրային շենքերում կենտրոնի տեղակայման պարագայում՝ հնարավորության դեպքում կենտրոնն ապահովել առանձին մուտքով, նախատեսել տաղավար հաճախորդների համար և սպասարկման այլ պարագաներ (աղբաման, նստարան, լուսավորվածություն և այլն), նախատեսել ավտոկայանատեղի կամ արդեն գոյություն ունեցող ավտոկայանատեղիից օգտվելու հնարավորություն, նախատեսել բարեկարգման աշխատանքներ՝ հաշվի առնելով տվյալ շենքի ճարտարապետական տեսքն ու կոնստրուկտիվ պայմանները
<b>3. Շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետությանը ուղղված շինարարատեխնիկական պայմաններն ապահովող միջոցառումներ</b>	
պատող կոնստրուկցիաներ	արտաքին պատերի, նախամուտքերի, նկուղների, տանիքների ջերմամեկուսացում
	հնարավոր նվազագույն մակերեսներ ապահովող ծավալահատակագծային լուծումների կիրառում
	պատերի արտաքին մակերևույթների պաշտպանությունն ապահովող երեսապատման, սվաղի, ջրակայուն և ջերմակայուն խառնուրդների կիրառում
պատուհաններ և մուտքի դռներ	ջերմապաշտպանության բարձր կարգ ունեցող պրոֆիլների և ապակեփաթեթների կիրառում
	տեղադրում տարրերի քվադրանթ
նյութեր	սերտիֆիկացված ջերմամեկուսիչ և շինարարական նյութեր



համակարգեր	ջեռուցման, օդափոխության, օդորակման, տաք ջրամատակարարման և լուսավորության էներգախնայող համակարգերի կիրառում
	ծախսաարդյունավետությունը հիմնավորելու դեպքում՝ այլընտրաքային էներգետիկ համակարգերի կիրառում
<b>4. Կենտրոնի մուտքի բաղադրիչներ</b>	
աստիճաններ և աստիճանահարթակ	բազալտե կամ դրսի համար նախատեսված չսահող սալիկներով երեսապատված, 0,45 մետրից բարձրի դեպքում բազրիքապատ, ելնելով եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ երկու կողմերից մթնոլորտային տեղումներից էկրաններով կամ այլ համապատասխան միջոցներով պաշտպանված
թեքահարթակ	հարթակի թեքությունը պետք է չգերազանցի թռիչքի երկարության 10 տոկոսը, վերին հարթության 0,45 մետր և դրանից բարձրի դեպքում թեքահարթակը պետք է ունենա երկկողմանի 0,70 և 0,90 մետր բարձրությամբ բազրիք և բռնածող, թեքահարթակի լայնությունը պետք է լինի ոչ պակաս 0,90 մետրից, իսկ շրջադարձային մասում՝ ոչ պակաս 1,20 մետրից, պատված չսահող նյութով կամ համապատասխան չսահող սալիկով
դռներ	երկփեղկանի, մեկ փեղկը ոչ պակաս քան 0,9 մետր լայնությամբ, ամուր նյութից, դեպի դուրս բացվող, առանց շեմի կամ դյուրանցանելի շեմով, մեխանիկական ետ քաշող լծակով (աբեյլար), հերմետիկ փակվող
հովիտ	պետք է ծածկի ամբողջ աստճանավանդակն ու թեքահարթակը
<b>5. Ընդունարան</b>	
տեղակայում	1-ին հարկ
մակերես	փոքր կենտրոնի համար 65-70 քմ, միջին կենտրոնի՝ 70-80 քմ, մեծ կենտրոնի՝ 80-120 քմ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ նախատեսել կամ չսահող սալիկ, կամ 34 կարգի կոմերցիոն փնոլեում, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	ոչ պակաս քան 3 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	երկփեղկանի, մեկ փեղկը ոչ պակաս քան 0,9 մետր լայնությամբ, փեղկերը երկկողմանի բացվող՝ մեխանիկական ետ քաշող լծակով (աբեյլար), առանց շեմի
առաստաղ	կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից)
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>6. ԲՍՓՀ սենյակ</b>	
տեղակայում	1-ին հարկ
մակերես	40 քմ ընդհանուր մակերեսով, միջանցիկ դուռ ունեցող պատով բաժանված 2 մասի՝ զննման և բժիշկների համար, հնարավորության դեպքում համապատասխանաբար 15 և 25 քմ մակերեսներով սենյակներ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ բժիշկների սենյակում կամ չ 4 կարգի լամինատե մանրահատակ, կամ 34 կարգի կոմերցիոն փնոլեում, կամ բետոնե լուծույթային հատակ, զննման սենյակում՝ սալիկապատ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	մուտքի և միջանցիկ դռների բացվածքը ոչ պակաս քան մեկ մետր, փեղկը ոչ լուսաթափանց՝ ներսից փակվող փականով, առանց շեմի
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
սանիտարական անկյուն	զննման սենյակում նախատեսել հարակից պատերը սալիկապատ տարածք՝ լվացարանով



<b>7. Կենտրոնում տեղակայված մարմինների (ՀՏԿ, ՄՏՏԳ, ՄՏՏԲ, ՍԱՏԲ) ղեկավարի սենյակ</b>	
տեղակայում	համապատասխան մարմնի աշխատասենյակի կամ աշխատասենյակների հարևանությամբ
մակերես	18-20 քմ
քանակ	3 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 33 կարգի կոմերցիոն լինելու, կամ c 4 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափսերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>8. Աշխատասենյակներ</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	յուրաքանչյուր աշխատողի համար ոչ պակաս քան 6 քմ աշխատանքային մակերեսի հաշվարկով
քանակ	ելնելով շենքային պայմաններից և աշխատակիցների մասնագիտական գործառույթներից
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելու, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափսերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>9. Դահլիճ</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	մինչև 20 աշխատողի դեպքում՝ 25-30քմ, 21 և ավելի դեպքում՝ յուրաքանչյուր աշխատողի համար հավելյալ 1,1 քմ մակերեսի հաշվարկով
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելու, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափսերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>10. Խորհրդատվության սենյակ</b>	
տեղակայում	1-ին հարկում՝ ընդունարանի և ԲՍՓՀ սենյակի հարևանությամբ
մակերես	15-20 քմ
քանակ	1 հատ



հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելում, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>11. Ռեսուրս կենտրոնի սենյակ</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	20-25 քմ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելում, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	յուրաքանչյուր սենյակում ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>12. Սերվերային սենյակ</b>	
տեղակայում	կենտրոնի սենյակների ընդհանուր դասավորվածության կենտրոնական մասում
մակերես	6-12 քմ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելում, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ
պատուհաններ	հնարավորության դեպքում բնական օդափոխության մեկ երդիկով, միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	0.9x2.1 մ չափերով, փակ դռներ, առանց շեմի, փականով, փեղկի ստորին մասում օդափոխության անցքերով և ամուր նյութից
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
պարտադիր պայմաններ	բնական և արհեստական համակարգերով ապահովել անդադար օդափոխություն և օդորակում
<b>13. Արխիվ</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	փոքր կենտրոններ՝ 30-35 քմ, միջին կենտրոններ՝ 50-55 քմ, մեծ կենտրոններ՝ 65-70 քմ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինելում, կամ բետոնե լուծույթային հատակ կամ սալիկապատ
պատուհաններ	1 կամ 2 երդիկ կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, ճաղավանդակապատ, մզեցված ապակիներով



դռներ	1.0x2.1 մ չափսերով, փակ դռներ, առանց շեմի, փականով, փեղկի ստորին մասում օդափոխության անցքեր
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>14. Տնտեսական սենյակ</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	15-20քմ
քանակ	1 հատ
հատակ	հաշվի առնելով եղանակային, շենքային և ծախսատարության պայմանները՝ կամ 34 կարգի կոմերցիոն լինոլեում, կամ c 5 կարգի լամինատե մանրահատակ, կամ բետոնե լուծույթային հատակ, կամ սալիկապատ
պատուհաններ	ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափսերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
<b>15. Խոհանոց</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	10-25քմ՝ կախված աշխատողների քանակից
քանակ	1 հատ
հատակ	սալիկապատ
պատուհաններ	ոչ պակաս քան 1 հատ՝ երդիկով կամ բարդ հանգույց ունեցող փեղկով՝ միջատապաշտպան ցանցով, 1-ին հարկում գտնվելու դեպքում՝ ճաղավանդակապատ, ելնելով տեղի եղանակային պայմանների առանձնահատկություններից՝ մզեցված ապակիներով
դռներ	1.0x2.1 մ չափսերով, միջսենյակային փակ դռներ, առանց շեմի, փականով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	թաց կետի հարակից պատերը սալիկապատ, իսկ մնացածը՝ հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
պարտադիր պայմաններ	արտաքին պատին տեղադրել ստիպողաբար օդհանման կետ՝ էլեկտրական օդամղիչ կամ գազօջախի վերևում տեղադրել օդահավաք սարք՝ առանձին արտածման խողովակով
<b>16. Սանհանգույցներ</b>	
տեղակայում	1-ին հարկում՝ մեկ հատուկ նշանակության և երկու սովորական սանհանգույց, մնացածը՝ ըստ շենքային պայմանների
մակերես	ոչ պակաս քան 6 քմ
քանակ	3-5 հատ
հատակ	սալիկապատ
պատուհաններ	հնարավորության դեպքում բնական օդափոխության 1 երդիկ՝ միջատապաշտպան ցանցով
դռներ	միջսենյակային, ներսից փակվող
առաստաղ	կախովի, լվացվող նյութից
պատեր	սալիկապատ
պարտադիր պայմաններ	բնական և արհեստական համակարգերով ապահովել անդադար օդափոխություն

հատուկ նշանակության սանհանգույցի համար պարտադիր պայմաններ	զուգարանակոնքի և լվացարանի հարակից պատերին 0,7 և 0,9 մետրի վրա ամրացված անկյունաձեւ և ծալվող բռնածողերով, տարբեր բարձրությունների վրա ամրացված հագուստի համար նախատեսված կախիչներով, հատակը սալիկապատված չսայթաքող սալիկներով
<b>17. Տեխնիկական սենյակ (կաթսայատուն)</b>	
տեղակայում	ելնելով պարտադիր տեղակայում ունեցող սենյակների դասավորվածությունից և շենքային պայմաններից
մակերես	6-15 քմ
քանակ	1 հատ
հատակ	սալիկապատ
պատուհաններ	առնվազն 1 երդիկ կամ բարդ հանգույց ունեցող փեղկ՝ միջատապաշտպան ցանցով, առաջին հարկում գտնվելու դեպքում ճաղավանդակապատ
դռներ	1.0x2.1 մ չափերով, միջսենյակային փակ դռներ, դուրս բացվող փեղկերով, առանց շեմի, փականով, փեղկի ներսի մասում օդափոխության անցքերով
առաստաղ	կամ կախովի (հեշտ ապամոնտաժվող թեթև նյութերից), կամ գաջեպատ, կամ գիպսաստվարաթղթե
պատեր	հարթ մակերեսով, լվացվող ներկածածկով
պարտադիր պայմաններ	քնական և արհեստական համակարգերով ապահովել անդադար օդափոխություն և օդորակում
<b>18. Տեղաշարժման տարածքներ</b>	
նախասրահ, սպասասրահ	մուտքի և ընդունարանի միջև ընկած հատվածում 20-40 քմ՝ ելնելով կենտրոնի մեծությունից և շենքային պայմաններից
միջանցքներ	ընդունարան, ԲՍՓՀ սենյակ և սանհանգույցներ տանող միջանցքների լայնությունը ոչ պակաս քան 2 մետր, մնացած միջսենյակային միջանցքները ոչ պակաս 1,20 մետրից
աստիճանա վանդակ	թռիչքի լայնությունը ոչ պակաս քան 1 մետր, բետոնե հղկված, պատված չսայթաքող սալիկով կամ այլ նյութերով, մեկ, կամ անհրաժեշտության դեպքում երկու կողմերից բազրիքապատ
պարտադիր պայմաններ	1-ին հարկում ներքին աստիճանավանդակների առկայության դեպքում՝ նախատեսել թեքահարթակ՝ համապատասխան չափորոշիչներին համապատասխան
<b>19. Տանիքի ջրահեռացման համակարգ</b>	
տանիք	չժանգոտող թիթեղից, ձնարգելիչ մանրամասերով
ջրահեռացման խողովակներ	կլոր կտրվածքով խողովակաշար՝ մինչև գետնախարսխի թեքահարթակ
ջրահեռացման թեքահարթակներ	առնվազն 1 մետր լայնությամբ բետոնապատված, սալիկապատված կամ ասֆալտապատ՝ համապատասխան թեքություններով և ամրացմամբ
արտաքին պատուհան նագոգեր	բազալտե երեսպատման նյութից համապատասխան թեքությամբ
<b>20. Զրամատակարարման, կոյուղաջրերի հեռացման և գազամատակարարման համակարգեր</b>	
ջրամատակա րարման ներքին ցանց	զոդման եղանակով մոնտաժված պոլիպրոպիլենե խողովակներով ցանց՝ համալրված ջրօգտագործման հաշվարկային քանակներին համապատասխան ավտոմատ սնուցմամբ, ինչպես նաև ճնշումային պոմպով և կուտակային բակով
ջրամատակա րարման արտաքին ցանց	համաձայն ՀՀ գործող նորմերի
կոյուղաջրերի հեռացման ներքին և արտաքին ցանցեր	համաձայն ՀՀ գործող նորմերի
գազամատա կարարման համակարգ	համաձայն ՀՀ գործող նորմերի
<b>21. Զեռուցման և տաք ջրի համակարգեր</b>	
խողովակաշար	զոդման եղանակով մոնտաժված պոլիպրոպիլենե խողովակներ
կաթսա	երկկոնտուրանի գազային կաթսա



էլեկտրական կաթսա	համակարգի ծավալներին համապատասխան՝ վթարային վիճակներում համակարգում մինիմալ ջերմաստիճան ապահովելու համար
<b>22. Օդափոխության համակարգ</b>	
բնական համակարգ	շենքի ներքին պատերում ներկառուցված օդատարներ
արհեստական ներածման և արտածման համակարգ	համաձայն ՀՀ գործող նորմերի
<b>23. Օդորակման համակարգ</b>	
անհատական՝ տեղային օդորակիչներ	սպլիտ և մուլտի սպլիտ համակարգեր
կենտրոնացված օդորակում	Ֆանկոիլ - չիլլեր համակարգ, կենտրոնացված ինվերտորային և այլն
<b>24. Էլեկտրամատակարարման համակարգ</b>	
կենտրոնի մուտքային սնուցում	220 Վ, եռաֆազ, հողանցումով
արտաքին լուսավորություն	շենքի մուտքի և հարակից բակային տարածքի լուսավորվածություն
ներքին լուսավորություն	համաձայն ՀՀ գործող նորմերի
ներքին վարդակային ցանց	խոհանոց - 6-8 հատ 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող հողանցումով վարդակ
	տեխնիկական սենյակ - 4-8 հատ 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող հողանցումով վարդակ
	սանհանգույց - 1 - 2 հատ 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող հողանցումով վարդակ
	տեղաշարժման տարածքներում - յուրաքանչյուր 6 զծամետրի համար 1 հատ 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող հողանցումով վարդակի հաշվարկով
	աշխատասենյակներում նախատեսել 1, իսկ ընդունարանում առնվազն 2 լրացուցիչ վարդակ՝ բաժանարար տուփից առանձին 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող(մնացած վարդակներից վիզուալ տարբերվող), տեղային օդորակման համակարգի դեպքում նույնատիպ սնուցել նաև օդորակիչները, մնացած վարդակների սնուցումը՝ յուրաքանչյուր աշխատատեղի համար 4 հատ վարդակի հաշվարկով (համակարգիչ, մոնիտոր, տպիչ, սկաներ, թվային հեռախոս ), բոլոր վարդակները՝ հողանցումով
Սերվերային սենյակ ներքին վարդակային ցանց (220Վ)	վարդակների քանակը նախատեսել 8-12 հատ և 1 վարդակ՝ բաժանարար տուփից առանձին 4,0մմ2 պղնձե մալուխով սնվող (մնացած վարդակներից վիզուալ տարբերվող), անխափան սնուցման սարքի (UPS) համար
էլեկտրամատակարարման համակարգերի լարանցում ների տարբերակներ	հատակային - ներկառուցված ծալքավոր խողովակներով նախագծում նշված կետերում ելքերով՝ առանց ելքերի տեղաշարժման հնարավորության լարանցումներ
	պատային - ներկառուցված մալուխներով և արտակառուցված լարանցման տուփերով՝ ելքերի տեղաշարժման մասնակի հնարավորությամբ լարանցումներ
	առաստաղային - կախովի առաստաղի վերևում մոնտաժված, յուրաքանչյուր աշխատատեղի համար առանձին ծալքավոր խողովակով խմբավորած, տեղաշարժման լիարժեք պաշարով, համապատասխան ուղղահայաց անցումով յուրաքանչյուր աշխատասեղանին միացնելու հնարավորությամբ լարանցումներ
<b>25. Պահպանության և հակահրդեհային համակարգեր</b>	
պահպանության համակարգ	համաձայն ՀՀ գործող նորմերի կամ սենսորային, կամ կոնտակտային ազդանշանային համակարգ
ջերմաձխազգայուն հակահրդեհային համակարգ	համաձայն ՀՀ գործող նորմերի կամ ձայնալուսաազդանշանային՝ հակահրդեհային վահանակով, կամ փոշեցրումով
<b>26. Համակարգչային, տեսահսկող և հեռախոսային ցանցեր</b>	

Սերվերային սենյակ	Սերվերային սենյակը համակարգչային և հեռախոսային ցանցի համար հանդիսանում է որպես հանգույց, տեղադրվում են սերվեր (սերվերներ), ցանցային սարքավորումներ (Switch), կապի սարքավորումներ, քաղաքային հեռախոսների սարքավորումներ, թվային հեռախոսների (VOIP) սարքավորումներ, համապատասխան հզորության անխափան սնուցման սարք (UPS) վերոնշյալ սարքավորումների համար
ցանցային վարդակ	յուրաքանչյուր աշխատատեղի համար 3 հատի հաշվարկով (համակարգիչ, սովորական կամ թվային հեռախոս, տպիչ)
ցանցերի նկարագրություն	Համակարգչային ցանցը կառուցվում է Սերվերային սենյակից յուրաքանչյուր աշխատատեղի համար 3 ցանցային վարդակի հաշվարկով (համակարգիչ, տպիչ (տպիչը տակդիրով կարող է գտնվել ցանկացած աշխատատեղի մոտ), սովորական կամ թվային հեռախոս VOIP), իսկ տեսահսկող սարքերի համար՝ յուրաքանչյուր սարքի հաշվարկով (ըստ կենտրոնների դասակարգման՝ փոքր կենտրոններում առնվազն 4 հատ, միջին և մեծ կենտրոններում առնվազն 6 հատ) նվազագույնը 5E կարգի (կատեգորիայի) մալուխների անցկացումով
Աշխատատեղերի համակարգչային և հեռախոսային ցանցերի լարանցումների տարբերակներ	պատային - արտակառուցված լարանցման տուփերով՝ ելքերի տեղաշարժման մասնակի հնարավորությամբ լարանցումներ
	առաստաղային - կախովի առաստաղի վերևում մոնտաժված, յուրաքանչյուր աշխատատեղի համար առանձին ծալքավոր խողովակով խմբավորած, տեղաշարժման լիարժեք պաշարով, համապատասխան ուղղահայաց անցումով յուրաքանչյուր աշխատասեղանին միացնելու հնարավորությամբ լարանցումներ
Տեսահսկման ցանցերի լարանցումների տարբերակներ	պատային - արտակառուցված լարանցման տուփերով՝ ելքերի տեղաշարժման մասնակի հնարավորությամբ լարանցումներ
	առաստաղային - կախովի առաստաղի վերևում մոնտաժված, յուրաքանչյուր աշխատատեղի համար առանձին ծալքավոր խողովակով խմբավորած, տեղաշարժման լիարժեք պաշարով, համապատասխան ուղղահայաց անցումով յուրաքանչյուր աշխատասեղանին միացնելու հնարավորությամբ լարանցումներ